



«ԱՐԱՐԱՏ»-Ն ՈՒ ԵՐԳ-ԵՐԱԺԾՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ\*

Այստեղ ևս առկա է թե՛ աղբյուրների բազմազանությունը և թե՛ միաժամանակ, միջնադարյան հայ մշակույթի նույն կենտրոնի կատարած ավելի քան վճռական դերը: Հայտնի է, որ Հովհաննես Կոլոտի աշակերտների թվում կան և չորս սարկավագներ՝ Մարտիրոս սարկավագ, Պետրոս Թերզիոլու, Պողոս Ախրըրյանն և Կարապետ Չիլիկլիրյան<sup>68</sup>: Մի կողմից, այստեղ ևեթ՝ Հովհաննես Կոլոտի դարոցում պաշտոնավարում է նաև Գասպար դպիր Սեբաստացին, որը Կոլոտի խոսքերով ասած՝ «բազում երախտիս ունի ի վերայ մանկանց մերոց համբակաց»<sup>69</sup>: Մյուս կողմից, Գրիգոր դպիր Գապասաքայանը, ԺԸ—ԺԹ դարերի մեր անվանի երաժիշտների մեջ ժամանակագրական կարգով «ամենն հինը»<sup>70</sup>, 1790-ական թվականների սկզբներին, 35—40 տարեկան հասակում Կեսարիայից գալով Կ. Պոլիս (ինչպես պարզաբանեց Ար. Ալպոյաճյանը)<sup>71</sup>, հանդիսանում է «անդրանիկ» հեղինակը, որ «երաժշտական արվեստին վրա ուշադրություն կդարձնե երեք տպագրյալ հատորներով»<sup>72</sup>: Մի երրորդ կողմից էլ սակայն, ԺԸ դարու հայ երաժիշտների մեջ մի ուրիշ համբավվող դեմք՝ «Պաղտատը Տիրացու կամ Սարկավագ Հովհաննես Մեծն, որ Էջմիածնա Սիմեոն կաթողիկոսի

ձեռնասուններեն էր, կըսվի. սա՛ Պոլիս կուգա և Թարականի երգոց ոմանց եղանակները կկանոնավորե: Սույն Պաղտատցիին կարդացվածքն այնքան անուշ և սրտորսակ էր, որ լավ գեղգեղող երաժշտին՝ ավանդաբար՝ Պաղտատը աղզը կհորջորջեն ցարդ»<sup>73</sup>: Ավելին, «ըստ ոմանց՝ Պաղտատցիին աշակերտ կըկարծվի» Կ. Պոլսի նշանավոր սարկավագ Ջեննե-Պողոսը, իսկ «Պաղտացի շարականագետ Կարապետ Վարժապետն» էլ՝ «սույն Պաղտատցիին թողը կհամարվի ըստ երաժշտական արհեստի»<sup>74</sup>: Այստեղ, ուրեմն, կրկին իմաստով հանդիպում են Պոլիսն ու Էջմիածինը, որովհետև, ինչպես հայտնի է, Էջմիածնում ևս հաղեչից եկած վարդապետներ հաստատուցին տեղի նոր դարոցը: Միայն թե՛ Արք. Ալվազյանը չի՞ սխալվում արդյոք, երբ Սիմեոն Երևանցու Կ. Պոլիս եկած սարկավագին «Հովհաննես» է անվանում: Վերը տեսանք, որ «Արարատի» խմբագրության պատասխանի մեջ նույն(“) սարկավագի անունն է «Թեոդորոս»: Եվ սա հաստատում են երկու այլ հեղինակներ էլ՝ Մեսրոպ եպ. Սմբատյանը և Մ. Արևելյանը, որոնք նույնպես պնդում են նաև, թե Գեվորգ Դ-ի երգած ու Ն. Թաշճյանի ձայնագրած եղանակների բուն աղբյուրը հենց հիշյալ Թեոդորոսն է: Գևորգ Դ-ի մասին Մ. Արևելյանը գրում է. «Ունենալով երգեցողության հաջող ձայն և մանկությունից սովորած լինելով շարականների եղանակը Գում-Գափուի մայր եկեղեցու դպիրներից, որոնք իրենց եղանակը երևանցի Սիմեոն կաթողիկոսի Թեոդորոս դպրից էին սովորած, շատ շարականներ ինքը՝ Կաթողիկոսը երգում է և Ն. Թաշճյանին կամ նորս հմուտ աշակերտներին ձայնագրել տալի»<sup>75</sup>: Ավելի մանրամասն տեղեկություններ է տալիս Մ. եպ. Սըմբատյանը: «Վեհափառ Տ. Տ. Գևորգ Դ կաթողիկոսն

\* Ծարուհաված «Էջմիածին» ամսագրի 1969 թվականի № Գ-ից:

<sup>68</sup> Անդ, էջ 72:

<sup>69</sup> Անդ, էջ 89. այստեղ տես նաև Հակ. պար. Նայանի նույնանման վկայությունը՝ «տիրացու Գասպար մահուտի մեծ ամուսնա կոչեցեալն Սեբաստացի»-ի մասին:

<sup>70</sup> Ար. Հիսարյան, Պատմություն հայ ձայնագրության և կենսագրությունը երաժիշտ ազգայնոց (1768—1909), Կ. Պոլիս, 1914, էջ 22:

<sup>71</sup> Պատմություն հայ Կեսարիո, հատ. Բ., Գահիրե, 1937, էջ 1583:

<sup>72</sup> Անդ, էջ 1582:

<sup>73</sup> Արք. Ալվազյան, Ծար հայ կենսագրությանց, պր. Ա., Կ. Պոլիս, 1893, էջ 121 (Ջեննե-Պողոս):

<sup>74</sup> Նույն տեղում:

ուսնայ է զեղանակս Ծարականի հայոց ի Կ. Պոլիս ի Սամաթիա մեծ թաղն հայոց և ի մայր Եկեղեցի պատրիարքարանին ի Գում-Գափու նույնութեամբ որպէս ի հնումն երգէին ի Ս. Էջմիածին. քանզի Թեոդորոս քաջավարժ շարականագետ և տրամաբան Աւագ Սարկուսագ աշակերտն երջանկայիշատակ Սիմեոն կաթողիկոսի երևանցոյ ի 1777 ամի ունենալով ի Կ. Պոլիս գրագում աշակերտս ուսնալս զեղանակս Ծարականի ըստ երգեցողութեան միաբանից Ս. Էջմիածնի ի սկզբանէ անտի և հաւորս Սիմեոն կաթողիկոսի. նոքա մինչ ի վերջին ժամանակս ի 1839 ամի երգէին ի Ս. Աստուածածին մայր Եկեղեցոյ Կ. Պոլսոյ զնոյն եղանակ շարականս, որոց մին է ուսուցիչ Վեհ. Հայրապետին մերոյ տիրացոյ Միքայէլ վարժապետ քաջ շարականագետ և տրամաբան, որ յետո ըստ թախանձանաց իշխանաց և ժողովրդեան ձեռնադրեալ է քահանայ ի Սամաթիա ի Ս. Գեորգ եկեղեցին անանկելով Յովսէփ, որ ի քահանայութեան և շարունակէր զպաշտօնն ուսուցչութեան իբրև քանքարաշահ ծառայն<sup>76</sup>: Եվ իր սասձներին որպէս ապացոյց, հեղինակը հետևյալ շահեկան փաստերն է բերում: «Վասն զի դեռ գտանին,— գրում է նա,— անկիսն մեծին Հայոց Արարատեան և ի Սիւնեաց նահանգս ծերունի քահանայք և դպիրք (խաղֆա կոչեցեալք), որք պահպանելով զհին եղանակն Սրբոյ Էջմիածնի՝ երգեն զԾարականն պնայէս, որպէս այժմեան ձայնագրեալ եղանակն է. զօ. ի Նախիջևանու գաւառի Ջուղայեցի Պօղոս և Աստապատցի Աբրահամ քահանայք (վախճանեալք անցեալ աման). որոց զերգեցողութիւնս շարականաց լուսեալ են եւ ինքնին և համեմատեալ ընդ այժմու եղանակին, որք և ուսնալ աւէին. 75 ամօք ստաջ ի վանս սորք Նախավկայի Դարաշամբայ, նմանապէս և ի Սիւնեաց նահանգի գտանին ծերունի քահանայք և դպիրք ըստ պատմելոյ Գրիգոր եպիսկոպոսի Տաթեւացոյ, որք զհին եղանակն շարականաց երգեն ըստ ձայնագրեալ եղանակին, զօ. Ալխաթեանցի տիրացոյ Եղիան, Գետաթաղցի Յովսէփ քահանան և այլք, որք ուսնալ են 60—70 ամօք ստաջ ի վանս Տաթևոս<sup>77</sup>:

Քննարկվող ձայնագրայ ժողովածուների մասին մեր խոսքն ամփոփելուց առաջ հարկ է նշել հետևյալը ևս: Հայտնի է, որ հայոց եկեղեցական երաժշտության կարգավորության ու ձայնագրայ ժողովածուների ստեղծման անհրաժեշտությունը նախապես գիտակցվել է պոլսահայ շրջաններում, ուր հայոց պատրիարքարանի նախաձեռնությամբ 1864—1875 թվականների ընթացքում ժողովներ են գումարվել և մասնաժողովներ կազմվել՝ կատարվելիք աշխատանքներին հնարավորին չպահով քննական ուղղություն տալու համար: Այդ ժողովները տարիներ շարունակ սպասված արդյունքը չեն տվել լոկ այն պատճառով, որ Կ. Պոլսի մի շարք հեղինակավոր շարականագետ տիրացու-երաժիշտները բոլոր հար-

ցերում համակարծիք չեն եղել: 1878-ին, երբ Գևորգ Դ-ը, արդեն որպես կաթողիկոս, ինքը նախաձեռնեց գործը, Պոլսից Ար. Հովհաննիսյանի հանձնարարությամբ Էջմիածին են գալիս երկու երաժիշտներ, «Պալաթու դպրապետ՝ տիրացու Կարապետ Պաղտատյանը և Երանյանի աշակերտներեն Նիկողայոս Թաշճյանը, որպեսզի մին երգե, իսկ մյուսը՝ ձայնագրե»<sup>78</sup>: Այս, անշուշտ, արված էր՝ Թաշճյանին հմուտ օգնական տալու մտահոգությամբ, և ոչ թե այն նկատառումով, որ Թաշճյանը լոկ ձայնագրագետ էր, այլ ոչ շարականագետ: 2Է՝ որ գիտենք, թե երբ Թաշճյանը Էջմիածնից վերադարձավ Պոլիս՝ Մայր Եկեղեցվո դպրաց դասուն թախանձանք ստանձնեց տեղվույն երաժշտապետության պաշտոնը<sup>79</sup>: Քիչ է սա, հայ եկեղեցական երաժշտության հմուտ էր Գևորգ Դ-ն էլ, որը տակավին «Պոլստ պատրիարքության ժամանակ մեծ համբավ մը ունեցած է իբր քաջ շարականագետ»<sup>80</sup>: Եվ որովհետև կաթողիկոսը համոզված էր, որ իր իմացած եղանակները բուն հին հայկական, Էջմիածնական եղանակներն են (և ոչ ստանց հիմքի, ինչպես երևում է վերոբերյալ տվյալներից), ամեն ջանք գործադրեց, որպեսզի Թաշճյանը ձայնագրի հիմնականում իր երգածը: Սրա համար է, որ Կարապետ Պաղտատյանն էլ, երբ «եստալ թե իր երգածին հար և նմանը չի ձայնագրեր Նիկողայոս Թաշճյան, նախամեծար համարելով Վեհ. կաթողիկոսին տուն տված եղանակը, չուզելով իր սկզբունքը զոհել շահասիրության համար, ուստի արհամարհելով իրեն հատկացված թոշակը, անմիջապես թողուց ս. Էջմիածինը և Պոլիս վերադարձավ»<sup>81</sup>: Պաղտատյանի հեռանալուց հետո գործին աջակցել է Մանկուտի սրբազանը: Այսպիսով, Ս. Թաշճյանի պատրաստում ձայնագրայ ժողովածուները չենք կարող դիտել որպես համակողմանի քննական աշխատասիրության արդյունք (ինչպես ակնարկել ենք տարիներ առաջ ևս)<sup>82</sup>: Բայց դրանք արժեքավոր են նրանով, որ ներ-

<sup>78</sup> Ար. Հիսարյան, Պատմություն հայ ձայնագրության, էջ 77:

<sup>79</sup> Անդ, էջ 119:

<sup>80</sup> Անդ, էջ 79:

<sup>81</sup> Անդ, էջ 77—78:

<sup>82</sup> Տես մեր հոդվածը՝ Մակար Եվմայան (ստեղծագործական դիմանկարը), «Էջմիածին», 1958, Դ, էջ 59: Ի դեպ ստենք, որ Ս. Թաշճյանը ինքը ևս գիտակցելով դա, իրապես սիրով ունկնդրել է իր տարած ձայնագրությունների մասին արվող անաչառ դիտողությունները և աշխատել հաշվի առնել դրանք: Համեմայն դեպս, շատ ուշագրավ փաստ է, որ Թաշճյանն իր հրատարակած ձայնագրություններին հետագայում նորից անդրադառնալով՝ մատիտով սրբագրություններ է թողել դրանց վրա, ինչպես վկայում է Ա. Գոլոյանը. «Անոր՝ Էջմիածին (1875) հրատարակված ձայնագրայ շարականին մեկ օրինակին վրա մատիտով կատարած փոփոխությունները մինչև 1890 թվականը դեռ Մայր Եկեղեցվո դպրանոցին մեջ կմնար» (տես՝ Ալևոր, Բալու, Գահրիբ, 1932, էջ 279):

<sup>75</sup> Մ. Աբեղյան, Գևորգ Դ Մեծագործ կաթողիկոս Ամենայն Հայոց, Վաղարշապատ, 1899, էջ 35:

<sup>76</sup> Հայկական ձայնագրություն, «Արարատ», 1881, էջ 480—481:

<sup>77</sup> Անդ, էջ 479—480:

կայացնու: են հայ եկեղեցական երգերի և անակա-  
վորման մի ուղղություն, որի հետեվորդներից է եղել  
ճան Գևորգ Դ-ը, որը ժամանակին պաշտոնապես  
վավերացրել է մեր հոգևոր բարձրագույն իշխանու-  
թյունը, և որը պատմականորեն իրոք կապված է եղել  
նույն երգերի բուն հայ միջնադարյան ու էջմիածնա-  
կան եղանակավորման ուղղության հետ: Ուստի  
խնդրո առարկա ժողովածուների նկատմամբ ցույց  
տրվելիք վերաբերմունքը համազուտ էր այն բանին, որ  
մասնագետները՝ ըստ արժանվույն գնահատելով  
դրանք, միաժամանակ պետք է բարձրացնեին հայ  
հոգևոր երգերի գոյություն ունեցող այլ եղանակավոր-  
ումները ևս գրի առնելու հարցը, թեկուզ և լույ գի-  
տության ծառայելու նպատակով: Ասենք՝ պոլսահայ  
միջավայրի վերոհիշյալ ժողովների ու մասնաժողով-  
ների վերաբերմունքը առարկայականորեն դրան էլ  
հանգեց, երբ ի վերջո վճռվեց կանգ առնել Ե. Տըն-  
տեյանի ձայնագրած Ծարակնոցի վրա, որն և հուսկ  
ուրեմն տպագրվեց բարեբախտաբար<sup>83</sup>: Իսկ Արևել-  
յան Հայաստանում, ուր եկեղեցական երգեցողության  
էջմիածնական ուղղությունը Սիմեոն Երևանցուց և  
ճրա Թեոդորոս սարկավազից հետո մի ամբողջ դար  
բարացած չէր կարող մնալ, և ուր, բացի այդ, կարող  
էր լինել (ու եղել է) ճան Սյունյաց աշխարհի ավան-  
դույթներին կապված մի ուղղություն, դրանք հրա-  
պարակելու համար գործնական միջոցների չեն դի-  
մել, ինչքան հայտնի է: Հարցը մամուլում բարձրաց-  
րել է Ս. Ամատունին, միայն ցավոք՝ չափազանց բա-  
նավիճողական հողվածուով<sup>84</sup>, ուր նա նույնիսկ կոնկ-  
րետ ծրագիր է առաջ քաշել, բայց հաստատ չգի-  
տենք, թե իրագործել է արդյոք այն: Սահակ Ամա-  
տունու գրավոր ելույթին առիթ է տվել Ն. Թաշճյանի  
հողվածը պոլսահայ «Հայրենիք» լրագրում, որտեղ  
անվանի երաժիշտը իր դեմ ուղղված կողմնակալ  
բազմաթիվ հարձակումները տարիներ շարունակ վե-  
հանձնաբար լուրջան մատնելուց հետո, մի սխալ  
տեղեկության հիման վրա այն մասին, թե էջմիած-  
նում, իբր, անգամ միաբանների ու Սիմոնի վերա-  
բերմունքը խիստ փոխվել է Գևորգ Դ-ի օրոք իրա-  
գործված ձայնագրությունների նկատմամբ, համբե-  
րությունից դուրս գալով, դժբախտաբար՝ սեփական  
գրչին անարժան արտահայտություններով պարսա-  
վանքներ է տեղացել աչ ու ձախ, և Արևելյան Հա-  
յաստանի եկեղեցական երգերը, իր հերթին, անվա-  
նել «պարսկական խառնաշփոթ» եղանակներ: Միև-  
նեռ խեղաթյուրված ձևով Ն. Թաշճյանին հաղորդված  
փաստը իրականում այն է եղել լույ, որ էջմիածնում  
լուրջ խոսակցության առարկա է հանդիսացել՝ Ծա-  
րակնի եղանակները ճան Երևանցուի Գրիգոր երա-  
ժիշտ-եպիսկոպոս Հովրյանից ձայնագրելու գովելի  
մտադրությունը: Բացատրելով այս ամենը, Սահակ  
Ամատունին ինքն էլ, սակայն, չափազանց տարվում

է բանավիճողական կրքերով. Ն. Թաշճյանին նա հա-  
մարում է «բաջ ձայնագրագետ», բայց ոչ շարակա-  
նագետ, որը մեր եկեղեցական երգերի եղանակները  
պետք է գրի առած լինեն հատկապես Կարապետ  
Պաղտատյանի երգածից, ճան մի բանի հակառա-  
կան դիտողություններ է անում ինչպես Ծարակնի  
ձայնագրության ընթացքի, այնպես էլ արդեն հրա-  
տարակված երգերից առանձին նմուշների վերաբեր-  
յալ, նույնիսկ 1881-ին ծերունի ու կիսահիվանդ կա-  
թոլիկոսի կատարումով իր իսկ ձայնագրած «օրհնու-  
թյունների քաղվածքները» անվանում է «հարմարեց-  
ված», միայն թե շահի բանավեճը և այլն: Ամատու-  
նու հողվածի վերջին մասը, ուր հեղինակը մի ան-  
գամ ևս հաստատելով, որ էջմիածնի միաբանների և  
Սիմոնի տրամադրությունների վերաբերյալ Ն. Թաշճ-  
յանին տրված տեղեկությունները սխալ են, գրում է.  
«Վերջացնելով հողվածս, ինչպես շատերի, նույնպես  
և Կրթագան Սիմոնի անդամոց ուղղությունը դարձ-  
նում են հետևյալ խնդրի վրա, որ ես՝ ամենայն նե-  
ղություն հաճն առնելով, կկամենամ գնալ Երևան, և  
որքան կարելի է շուտով ձայնագրել վերոհիշյալ  
եպիսկոպոսից մեր հին շարականների եղանակները,  
և այս այն նպատակով, որ եթե տպագրությանը լույս  
տեսնելու բաղդ չի ունենա, գոնե իբրև մի հնություն  
կպահվի վանքիս մատենադարանի մեջ. ապա թե ոչ  
կգա մի օր, որ կորցրած կլինենք մեր հին շարականի  
ձայները և իզուր տեղի տված կլինենք մեր հաջորդ-  
ներին մեզ վրա ծիծաղելու և մեր անհոգության հա-  
մար մեզ իրավամբ հանդիմանելու և նախատելու:  
Ուստի ժամանակավորապես վանքիցս հեռանալու լույ  
թույլտվություն են խնդրում նույն Սրբազան Սիմոնի  
անդամներից»: Կարծում ենք, որ արժե մասնավոր  
որոնումներ նախաձեռնել պարզելու համար, թե Ա-  
մատունին երբևէ իրագործել է հիշյալ երգերի ձայ-  
նագրությունները, և եթե այդ, ապա որտե՞ղ են գըտ-  
նվում դրանք այժմ: Համենայն դեպս հիմքեր կան  
պնդելու համար, որ շարական երգերի եղանակների  
էջմիածնական կամ արևելահայկական և կամ «տե-  
ղական» կոչված տարբերակներ իրոք գոյություն ու-  
նեցել են, և դրանք նույնպես ձայնագրվել են: Արշակ  
Բրուտյանը, ամենայն հավանականությամբ, նույնիսկ  
ձեռքի տակ ունեցել է այդ ձայնագրությունները և  
դրանք համեմատել Ն. Թաշճյանի հրատարակած Ծա-  
րակնոցի հետ: Ինչպես ցույց է տալիս հետազոտու-  
թյունը, Բրուտյանի դիվանում պահվող վավերաթղթ-  
երից մեկում հաստատագրված են ճրա կատարած  
հիշյալ համեմատության արդյունքները: Այդ վավե-  
րաթուղթը մեծադիր էջեր ունեցող մի տետր է, ուր  
«Ծարականներ» ընդհանուր խորագրի տակ յուրա-  
քանչյուր երես բաժանված է չորս պլուսակի: Դրան-  
ցից առաջինում բերվում են չորս պլուսակի: Դրան-  
ցից երկրորդում՝ եղանակի տեսակի անունը («ԱԿ», «ԲՁ»  
և այլն). երրորդում ցույց է տրվում, ինչպես պարզ-  
վեց, Թաշճյանի հրատարակած Ծարակնոցի համա-  
պատասխան երեսը. իսկ չորրորդում՝ «Պոլսի և տե-  
ղականը» ենթախորագրի տակ ամփոփվում են համե-

<sup>83</sup> Տես՝ Ե. Տնտեսյան, Ծարակնի ձայնագրեալ, Իւրբանոլ, 1934:

<sup>84</sup> Սահակ Մարկավազ, Պ. Նիկողայոս Թաշճյանի հողվածի առթիւ, «Արարատ», 1888, էջ 804—812:

մատուցանող արդյունքները, հետևյալ արտահայտություններով. «նման», «նման են», «որոշ չափով նման», «որոշ նմանությամբ», և կամ՝ «տարբեր», «տարբեր են», «գրեթե տարբեր», որոշ չափով տարբեր», «որոշ տարբերությամբ»: Այս ձևով համեմատված են գրեթե բոլոր շարականները, հերթակարգով, ըստ կանոնների ու շարքերի<sup>85</sup>: Ընդհանուր պատկերը չափազանց հետաքրքիր է: Կան առանձին, ոչ ծավալուն կանոններ ու շարքեր, որոնք ամբողջությամբ «տարբեր» են: Այսպես, Հովհաննու Մկրտչի կանոնի չորս երգերից չորսն էլ «տարբեր» են: Ավագ օրհնությունների «Ա» շարքի տաս երգերից տասն էլ «տարբեր» են: Նվագ ակնառու չեն, սակայն, և հակառակ դեպքերը. ասենք՝ նույն ավագ օրհնությունների «Գ» շարքի տասը երգերից տասն էլ «նման» են, դարձյալ՝ «Դ» շարքի տասը երգերից տասն էլ «նման» են և այլն: Իսկ առհասարակ սովորական են հետևյալ տիպի հարաբերությունները: Աղոթացից Գ կիրակիի կանոնի ու դրան հետևող ապաշխարության երգերից 30-ը «նման» են, 6-ը՝ «որոշ նմանությամբ», 4-ը՝ «տարբեր», և 1-ը՝ «որոշ տարբերությամբ»: Ե կիրակիի կանոնի ու դրան հետևող ապաշխարության երգերից 15-ը «նման» են, 7-ը՝ «որոշ նմանությամբ», ու 6-ը՝ «տարբեր» և այլն: Թեև Բրուտյանը քննարկվող տեսրի երևանների երրորդ պլուսակներում քերում է լոկ հրատարակված ձայնագրյալ Ծարակնոցի համապատասխան էջերը, սակայն այսպիսի մի համեմատություն անելու համար նա ձեռքի տակ ունեցած պիտի լիներ նաև «տեղական» երգերի ձայնագրությունները: Եվ այդպիսիք վաղ թե ուշ կգտնվեն անշուշտ, բայց դրանք այլևս կունենան լոկ գիտական-ճանաչողական նշանակություն:

Բազմաձայնության ճաշակը՝ էջմիածնում սերմանողներից առաջինը դարձյալ Նիկ. Թաշճյանն է եղել: Եվ վաճակյալ միջավայրն էլ խոսքով թե գործով այս նորույթը ևս ըստ ամենայնի ընկալելու կազմ ու պատրաստ է գտնվել: Տակալին 1874-ին Ստ. վրդ. Մխիթարյանը «Արարատ»-ում թողել է հետևյալ վկայությունը. «Ծատ և շատ ուրախական էր գիշերային հանդեսն նոր տարվո առթիվ Վեհարանին մեջ, ուր Միաբանությունը հանդիսակից էին յուրյանց բարեխնամ Հայրապետի հետ. նախապես պարոն Թաշճյանը ներկայացուց Նորին Վեհափառության մի մեծ թերթի վերա գծած հայկական ձայնագրեր մի նոր երգի վերա՝ որ իբրև ուխտ-ի նոր տարի հանուն Վեհափառ Կաթողիկոսի շարահյուսյալ էր, հետևաբար ձայնագրություն ուսանող խումբն գրավորապես երգեցին՝ զայն երգը արտառուչ եղանակովը եվրոպական քառամյուղ ներդաշնակությամբ»<sup>86</sup>: Էջմիածնը սակայն, բազմաձայնությունը լոկ ընկալողի (թեկուզ և ուրախությամբ, պատրաստակամությամբ ընկալողի) դերում չմնաց: Ժամանակն այնպիսին էր, որ

հայ շատ խմբավարների, երաժիշտների, կատարողների և ստեղծագործողների ջանքերը նույնիսկ տարեկանորեն ուղղվում էին հայկական ժողովրդական և հոգևոր երգերը ներդաշնակելու և բազմաձայն երգեցողությունը ժողովրդի մեջ տարածելու նպատակին: Արդեն օրակարգի հարց էր դառնում հայոց պատարագը ներդաշնակելու խնդիրը, և այս բոլորի սունչությամբ, ավելի ու ավելի սուր էր զգացվում ազգային երաժշտության գիտակ ու եվրոպական առումով բարձրագույն կրթություն ստացած մասնագետ երաժիշտների պակասը: Եվ այն հանգամանքը ահա, որ հենց այս շրջանում Գևորգ Դ-ը Թաշճյանի ամենահաջողակ աշակերտին՝ Մակար Եկմայանին, Մայր Աթոռի հաշվին ուղարկում է Պետերբուրգ, կոնսերվատորիայում բարձրագույն կրթություն ստանալու, պարզ ցույց է տալիս, որ էջմիածինը ի վերջո հանդես է եկել որպես բազմաձայնության մշակույթը (ինչպես և առհասարակ արդի կոմպոզիտորական արվեստը) հայ իրականության մեջ արմատապես հիմնավորելու գործին գիտակցորեն աջակցած խոշորագույն կազմակերպությունը: Ոչ միայն պատարագի, այլև առհասարակ հոգևոր տաղերի, երգերի և շարականների մշակման գործին էջմիածնի ու «Արարատ»-ի ցույց տված լուսամիտ վերաբերմունքը հայտնի երևում է թեկուզ և Ռ. Ղորղանյանի կատարած ներդաշնակություններին նվիրված գրախոսականից<sup>87</sup>: Ինչ վերաբերում է Պատարագի ներդաշնակության, ապա այս բնագավառում կատարված նախակայանական փորձերին<sup>88</sup> ըստ էության չի էլ անդրադարձել ամսագիրը, կարծես արդարացի քննադատությունն իսկ սվյալ դեպքում հետաձգելով՝ ընդհանուր շարժումն ու խանդավառությունը չկանցնելու մտահոգությամբ: Իսկ Եկմայանի աշխատանքներին խմբագրությունը, ինչպես և առհասարակ հոգևոր իշխանությունը հետևել են ուշադիր: Ինչպես գիտենք՝ Եկմայանը Պատարագի եռաձայն ներդաշնակությունը իրագործեց Պետերբուրգում, կոնսերվատորիան ավարտելուց հետո, երբ որպես խմբավար աշխատում էր տեղի հայկական եկեղեցում, ուր և առաջին անգամ կատարեց նա իր «Ծոռաձայնի» էական մասերը: Քառաձայն Պատարագի հատվածները Թիֆլիսում, վանքի Մայր տաճարում Եկմայանը հնչեցրել է Վրաստանի և Իմերեթի հայոց թեմակալ առաջնորդ Գևորգ արք. Սուրենյանցի թույլտվությամբ: Երբ ավարտվում է «Քառաձայնը» ևս, նույն առաջնորդի միջնորդության հիման վրա Երիմյան Հայրիկը 1895 թվականի հունիսի 7-ին հայրապետական կոնգակով թույլատրում է Եկմայանի Պատարագի տպագրությունը և հայ եկեղեցում նրա գործածությունը: Ծուով Գևորգ արք. Սուրենյանցը հոգում է նաև տպագրության ծախսը: 1896-ին Լայպցիգում լույս է տես-

<sup>85</sup> Ա. Բրուտյան, Դիվան, ծր. № 28 (տես Գրականության և արվեստի թանգարան):

<sup>86</sup> Ձայնագրություն և Հանդեսը, «Արարատ», 1874, էջ 27:

<sup>87</sup> Ռուբեն Աբեղա, Երգեցողությունը Հայաստանյայց ս. եկեղեցվո բազմաձայն մշակմամբ Ռ. Դ., Մոսկվա, «Արարատ», 1918, էջ 519:

<sup>88</sup> Տես մեր հոդվածը՝ Մակար Եկմայան (ստեղծագործական դիմանկարը), «Էջմիածին», 1958, Դ, էջ 60—61:

նում Եվմայլանի «Երգեցողությունը Ս. Պատարագի» աշխատությունը և կարճ ժամանակում լայնորեն տարածվում<sup>89</sup>։ Այս բոլորից հետո էլ, 1898-ին, ամսագիրը իր էջերը բացում է Կոմիտասի արդեն հիշատակված գրախոսականին։ Վերջինս, որ «Արարատ»-ում երբևէ հրատարակված երաժշտագիտական ամսագրուրջ հոդվածներից է, բացառիկ տեղ ունի մեր գրադեմիական ստանապարտությամբ։ Երբ դատում ենք Կոմիտասի մասին, ուշադրությունը սևևեղով նրանում շարադրված մտքերի սկզբունքային կողմի վրա, այն ամբողջապես ընդունում ենք որպես հեղինակի բացառիկ տաղանդի փայլատակումներից մեկը. իսկ երբ խոսքը Եվմայլանի շուրջն է, անվերջ տարվում ենք նրան պաշտպանելու խուն ցամկությունը։ Հողվածում Կոմիտասը նախ, մեր երաժշտագիտության մեջ առաջին անգամ, բացահայտելով հայկական հիմնական ձայնաշարի քառյակային (կվարտային) կառուցվածքը (որ տեսական ինքնուրույն հարց է), Եվմայլանի Պատարագը քննում է ըստ եղանակների փոխադրության (եկրոպական նոտաների), տաղաչափության, շեշտադրության, ձայնառության ու ներդաշնակության։ Նա ցույց է տալիս, օրինակ, որ «Այսօր մեռեալք» երգի (էջ 240) «կենդանաց» բառի եացս վանկը բնագրում c-des-c-b է, այնինչ Եվմայլանը փոխադրել է՝ b-c-b-as, Ծարականի երգեցողությանը հատուկ երաժշտա-տաղաչափական հիմնական օրենքը (երկար վանկից հետո տվյալ տողը, հատվածը կոճատ թվով պարզ վանկերի օգնությամբ ընդմիջելը կամ վերջավորելը (Պատարագի արարողության մեջ «շատ փոփոխված և այլալված» է, որ շեշտադրության գլխավոր պահանջը (երգում համաձայնեցնել լեզվի ու երաժշտության քերականական ու իմաստային շեշտերը) «այս ձեռնարկում... ամեն տեղ պահված է», «ի կոյս վիճեն» մեղեդիում ձայնառությունը սխալ է պահված (fis-cis), եռաձայն արական խմբի համար նախատեսված «Մորհուրոյ խորին»-ում ներդաշնակությունը չի համապատասխանում մեղեդիին, որովհետև «եղանակը բաղկացած է երկու moll քառյակից՝ a-h-c-d-e-(f-g), որոնք ընդմիջվում են g-a-h-c dur քառյակով. ուրեմն պետք է ներդաշնակել ըստ այնմ», և որ «Պատարագի արարողության վերաբերյալ մի քանի կտոր բաց է թողած. մի քանի մեղեդի, Ավագ հինգշաբթիի սըրբասացությունը, Ծննդյան և Ջատկի թափորի «ավետիս»-ները, բոլոր տաղերը և մի քանի մանր բան»<sup>90</sup>։ Այս և նման ճիշտ դիտողությունների կողքին, որոնք բոլորն էլ, ի դեպ, լույ Եվմայլանին չեն վերաբերում, այլ նաև ընդհանրապես այն փաստին, որ «մեր եկեղեցական երգեցողության մեջ խիստ փոփոխման է ենթարկվել մանավանդ պատարագի արարողությունը» (ինչպես օրինակ տաղաչափության անկության ավանդը), Կոմիտասը անում է մի քանի անտեղի նկատողություններ ևս Եվմայլանի հաջող կերպով ներդաշնակած «Սուրբ սուրբ»-ի և «Բրիստոս ի մեջ մեր»-ի մասին, գտնում է, որ ձայնառության գրված մի շարք մեղեդիներում կան հնգյակի և ությակի գուգընթաց հաջորդություններ (բայց դրանք Եվմայլանի մոտ բոլոր դեպքերում ստացվել են երաժշտական նախյոյ գ և հաջորդ նախադասությունների միջև, մի բան, որ թույլատրվում է հարմոնիայի նույնիսկ դարձյալան խնդիրներում) և այլն։ Ու առավելապես այս կետերն են ժամանակին վրդովեցրել Եվմայլանին, որ երևում է «Արարատ»-ի խմբագրությանը ուղղված իր կարճատև նամակից էլ։ Բայց Կոմիտասը առհասարակ բարձր է գնահատել Պատարագը, միայն թե իր գրախոսականով ցանկացել է հստակացնել, որ հայոց Պատարագի արարողության մշակումը Եվմայլանի կատարած թեկուզև հաջող ներդաշնակությամբ սպառված համարել չի կարելի։ Սրան համամիտ է եղել խմբագրությունը ևս, որը նույնպես ոչ միայն ըստ արժանվույն գնահատել է Եվմայլանի Պատարագը, այլև ամեն կերպ աջակցել նրա տարածմանը, արձագանքել նրա ունեցած փայլուն հաջողություններին։ Այսպես, օրինակ, երբ 1906-ին Կ. Պոլսի Մայր եկեղեցում Գր. Մեմեսերյանի ղեկավարությամբ կատարվում է Եվմայլանի եռաձայն Պատարագը, ամսագիրը իր հաճելի պարտքն է համարում այդ առթիվ հրապարակել տեղից ստացված հիանալի մի հոդված<sup>91</sup>, որին արժեք ծանոթանալ այստեղ գեթ հատվածաբար, բայց տեղի տրության պատճառով զանց ենք առնում։

Եվ այսպես՝ «Արարատ»-ում նրա գոյության հիմնամյա շրջանում հյուպարակված ու երգ-երաժշտության վերաբերող նյութերը բաժանելով չորս խմբի, մենք համատեղակի ծանոթացանք դրանցից առաջին երկուսին։ Գ ու Դ խմբերին ևս անդրադառնալու առիթ կունենանք տակավին։ Մանավանդ որ Գ խմբի նյութերում կենտրոնական տեղը գրավում են Կոմիտասի հոդվածները, որի ծննդյան 100-րդ տարելիցը նշելու է շուտով համայն հայությունը։ Բայց և այն, ինչ բերվեց ու քննվեց վերևում, մեզ իրավունք է տալիս հաստատելու, որ «Արարատ»-ը երաժշտության հարցերով զբաղված մեր ամենաաչքի ընկնող ամսագրերից է, հարուստ, փոքր ու մեծ հաղորդումների թե կենսագրական ակնարկի, հրապարակախոսության, քննադատության թե գիտության բազմապիսի երևույթներով։ Նա իր էջերում պատասպարված փաստաշատ նյութերով մեծապես օգնում է գծելու անցած դարավերջի ու երաժշտա-հասարակական և գիտական մտքի զարգացման իրական պատկերը, որով և արժանի տեղ է գրավում հայոց երաժշտական մշակույթի պատմության մեջ։

<sup>89</sup> Հմմտ. մեր հոդվածը՝ Մակար Եվմայլան, «Էջմիածին», 1958, Բ-Գ, էջ 55—57։

<sup>90</sup> Երգեցողությունը Ս. Պատարագի, «Արարատ», 1898, էջ 111—117։

<sup>91</sup> Տաճկահայք, Եռաձայն Մայր եկեղեցվո մեջ (Եվմայլան և Մեմեսերյան), «Արարատ», 1906, էջ 518—523։